

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

2001 թ. Լեհաստանում լոյս են տեսել հայագիտական մի շարք աշխատություններ, որոնցից առաել կարեւոր են Կրակովում հրատարակուած երեք ուսումնասիրությունները¹:

Էդուարդ Տրյարսկու եւ Տադէուշ քահանայ Զալեսկու գրքերը հրատարակել է լեհահայերի՝ Կրակովում գործող «Հայ մշակոյթի համակիրների միությունը», որը հրատարակում է նաեւ «Բիւլետէն» անունով մի ամսագիր:

Էդ. Տրյարսկու «Հայերը Վարշաւայում» աշխատությունը այդ քաղաքի հայութեան համակարգուած պատմությունը է: Այն, ինչպէս հեղինակն է նշում «Մուտք»-ում, ընդամէնը տարբեր նիւթերի հաւաքածոյ է, որոնցով ներկայացւում են հայերի ու լեհահայերի տարաբնոյթ կապերը Լեհաստանի մայրաքաղաքի հետ: Աշխատությունը, որը իւրայատուկ մի մասնակցութիւն է Լեհաստանում հրատարակութեան պատրաստող «Լեհահայերի կենսագրական քառարան»-ի ամբողջացմանը, յատկապէս արժէքաւոր է այն իմաստով, որ վերջին 15 տարիներին Լեհաստանում տպագրուած հայագիտական յօդուածներում եւ գրքերում վարչաւարչական

¹ Էդուարդ Տրյարսկու «Հայերը Վարշաւայում, նիւթեր պատմագիտական ուսումնասիրութիւնների համար», 152 էջ (Edward Tryjarski. Ormianie w Warszawie, materiały do dziejów. Kraków, 2001), Տ. ԹԱԴԵՍԿԱՅ ԶԱԼԵՍԿԱՅ «Լեհահայ հոգեւորականութեան համակարգիտական քառարան», 122 էջ (ks. Tadeusz Zaleski. Słownik Biograficzny Duchownych ormiańskich w Polsce. Kraków, 2001) եւ Կրակովի Եպիսկոպոսական համալսարանի ուսուցչապետ, յայտնի իրանագէտ ու հայագէտ ԱՆՐԻՇԷՅ ՊԻՍՈՎԻՉԻ «Հայերէնի (գրաբարի եւ արեւելահայ տարբերակներ) փրակաւորութիւնը», 480 էջ (Andrzej Pisowicz. Gramatyka Ormiańska, grabar-aszcharhabar, Kraków, 2001).

Թեան մասին շատ քիչ նիւթեր կան: Մինչդեռ վարչաւահայերը կարեւոր դեր են ունեցել Լեհաստանի մայրաքաղաքի Ժէ-ժԸ. դպատմութեան մէջ: Գրքի արժէքը մեծանում է յատկապէս ի. դարի վարչաւահայերի մասին առկայ տեղեկութիւններով, քանի որ փոքրաթիւ լինելու պատճառով անցեալ դարի, մասնաւորապէս 1930-1990-ական թուականների վարչաւահայ գաղութի մասին շատ քիչ տեղեկութիւններ են մտել գիտական չրջանառութեան մէջ: Եղած հատուկէնս տուեալներն էլ ցրուած են լեհահայ պատմութեանը վերաբերող հարիւրաւոր աշխատութիւններում ու յօդուածներում: Դրանք ի մի բերելն ու համակարգուած ներկայացնելը տաժանակիր աշխատանք է, որը սիրով կատարել է հեղինակը աւելի քան երեսուն տարի ուսումնասիրելով ոչ միայն տպագիր, այլեւ անտիպ աշխատութիւններ, դիւանական փաստաթղթեր ու այլ կարգի վաւերանիւթեր: Աւելին. հեղինակը թերթել է «Վարչաւահայ կեանք» (Zycie Warszawy) օրաթերթի 1966-1999 թթ. համարները եւ գրախօսուող գրքում գետեղել նշուած թերթում տպագրուած լեհահայերի բոլոր մահախօսականներից (160 հատ) հաւաքուած լուսանկարները: Հեղինակը չրջել է մայրաքաղաքի բոլոր 15 գերեզմանոցները եւ կազմել դրանցում քաղուած բոլոր լեհահայերի ցանկը, ինչպէս եւ հաւաքուած գերեզմաններից մօտ 80-ի լուսանկարները գետեղել գրքում: Նաեւ գերեզմաններից մօտ 80-ի լուսանկարները գետեղել գրքում: Ի դէպ, 1977-1979 թթ. ծերունազարդ գիտնականին այդ որոնումներում ուղեկցել է գործուղումով Լեհաստանում գտնուող արուեստաբան Ալեքսանդր Մանուչարեանը:

Վարչաւայում յայտնաբերուած հայերէն մակագրութեամբ հնագոյն տապանադրերը երկուսն են, որոնք գտնուել են Դոմինիկեանների՝ Ս. Եացեկ վանքի բակում: Մէկը 1677 թ., միւսը՝ 1683 թ. (հանդուցեալներից երկուսն էլ Եազովեց քաղաքի հայերից են): Ամենագրուցեալներից երկուսն էլ Եազովեց քաղաքի հայերից են այլն): Թարմ չիրիմը թուագրուած է 1999 թ.:

Աշխատութիւնը վարչաւահայերին ներկայացնում է ըստ մասնագիտութիւնների (վաճառականներ, արհեստաւորներ, գործարանաւարներ, բանկիրներ, իրաւաբաններ, թարգմանիչներ, բժիշկներ ու դէտէկներ, հոգեւորականներ, արուեստագէտներ, նկարիչներ եւ այլն):

Թատուկ գլուխ է նուիրուած 1918-1939 թթ. ժամանակաշրջանին, որտեղ բազմաթիւ գործիչների անուններ է բերում (օր. Վարչաւայի օպերային թատրոնի տնօրէն, դերասան Սերգէյ Շելկովնիկով, Վարչաւայում գորգերի մեծ խանութ ունեցած Սարգիս Փանոսեան, օպերային յայտնի երգիչ Սերգէյ Մետաքսեան, սենատոր Սա-

մոռել Մանուգեւիչ, ազգային-քաղաքական խոշոր գործիչ Եանուշ Ենջեյեւիչ, որը Եուգեֆ Պիլսուցկու գլխաւորութեամբ գործող Լեհաստանի ազատագրական բանակի քաղաքական նշանաւոր ղեկավարներէից էր, 1933-1934 թթ. Լեհաստանի Հոգեւոր գործերի եւ լուսաւորութեան նախարարը եւ ուրիշներ):

Վերջին գլուխը նուիրուած է Ի. դարավերջի վարչաւահայ գաղութի ներկայացուցիչներին: Այստեղ եւս բերում է բազմաթիւ ազգանուններ, ներկայացնում լեհահայերի մշակութային, կրթական ու տնտեսական կազմակերպութիւնները, անդրադառնում Հայաստանից 1990-ական թուականներին Վարչաւահ գաղթած հայերին ու նրանց ծաւալած գործունէութեանը (օրինակ՝ նրանց ջանքերով 1995 թ. յունուարի 8-ին Վարչաւայի Ձուլիբուժ թաղամասում բացուել եւ կարճ ժամանակ գործել է «Հայոց լեզուի եւ մշակոյթի՝ Մեսրոպ Մաշտոցի անուան դպրոցը», որն ունէր մօտ 50 աշակերտ):

Տաղեուշ քահանայ Զալեսկու (Լեհահայերի այսօրուայ հոգեւոր հովիւն է) աշխատութիւնը բացւում է կաթոլիկ հայերի «Կիլիկիոյ կաթողիկոս եւ պատրիարք» Ներսէս-Պետրոս ԺԹ-ի առաջաքանով, ուր նշում է, որ ԺԴ. դ. սկզբին հիմնուած լեհահայոց եկեղեցին մեծ ներդրում է ունեցել Լեհաստանի եւ ընդհանրապէս կաթոլիկ եկեղեցու պատմութեան մէջ: Նա մէջբերում է Հռոմի Յովհաննէս-Պօղոս սրբազան քահանայապետի հետեւեալ խօսքերը. «Իմ հայրեմիքում (Լեհաստանում - Ռ. Հ.) գործել է ձեր կաթոլիկական հայոց եկեղեցին, որը լեհ ժողովրդի պատմութեան մէջ գրել է սքանչելի դրուագներ: Ձեմ կարող մոռանալ լեհահայոց մեծ եպիսկոպոսների անունները, յատկապէս նրանցից վերջինին՝ Լվովի արքեպիսկոպոս Թեոդորովիչ մեծ եպիսկոպոսին, լեհահայոց եւ լեհ եկեղեցիների մեծ վերանորոգիչին, Կրակովի իմ մեծ նախորդի՝ կարդինալ Սալիեհայի մեծ քարեկամին»:

Բառարանում տրուած են ԺԷ-ի. դարերի Լեհաստանում գործած 246 (հիմնականում հայազգի) եկեղեցական գործիչների համառօտ կենսագրականները: Իւրաքանչիւր բառայօդուածից յետոյ նշուած է աղբիւրը: Հեղինակը այդ բոլոր հոգեւորականներին պայմանականօրէն բաժանում է տասը խմբի. Լվովի արքեպիսկոպոսները (լեհահայ եկեղեցու պետերը), Լվովի թեմի քահանաները (այս խումբը ամենաբազմաքանակն է), Հռոմի պապական ճեմարանի հայ չրջանա-

լարտները, որոնք Փոքր Ասիայում եւ Մերձաւոր Արեւելքում բնակուող հայ ընտանիքի զաւակներն էին, Մխիթարեանները (հիմնականում Վիեննայի): Յուցակում ընդգրկուած են նաեւ լեհահայ եկեղեցիներում տարբեր ժամանակներ ծառայութեան մտած փոքրաթիւ լատին հոգեւորականներ, նաեւ լեհեր, որոնցից օրինակ Ստեֆան Վըշնեւսկին 1920-ական թուականներին ծառայելով լեհահայոց եկեղեցում, 1957 թ. ընտրուեց լեհական եկեղեցու գլուխ (պրիմաս):

Աշխատութեան մէջ շատ կարեւոր տեղեկութիւններ կան լեհահայոց եկեղեցու կազմակերպական կառոյցի փոփոխութիւնների մասին, որոնք տեղի ունեցան երկրորդ աշխարհամարտի բռնկումից յետոյ: Մինչ այդ, 1939 թ. մահացաւ կաթողիկ եկեղեցու շրջանակներում մեծ հեղինակութիւն ունեցող Եռլեֆ թէոդորովիչ արքեպիսկոպոսը: Լեհահայոց եկեղեցական ժողովը ընտրեց երեք թեկնածու, որոնցից մէկին Վատիկանը պիտի նշանակէր լեհահայոց եկեղեցու գլուխ: Սակայն երկրորդ աշխարհամարտը սկսուելուց յետոյ նրանցից ոչ մէկը չնշանակուեց: Մինչեւ 1954 թ. լեհահայոց եկեղեցին ղեկավարում եւ Վատիկանի առաջ պատասխանատու էր Դիոնիս Կայետանովիչը: Նրա մահուանից յետոյ լեհահայոց եկեղեցին փաստօրէն մնում է անգլուխ: 1957 թ. Վատիկանի՝ Արեւելեան եկեղեցիների տեսչութիւնը որոշում կայացրեց լեհահայ եկեղեցին ենթարկել Լեհաստանի կաթողիկ եկեղեցու պետին (պրիմաս): Փաստօրէն լեհահայ եկեղեցին, որ մօտ 200 տարի անմիջականօրէն ենթարկւում էր Հռոմի Պապին եւ անկախ արքեպիսկոպոսութիւն էր, 1957 թ. յետոյ կորցրեց անկախութիւնը եւ ենթարկուեց Լեհաստանի պրիմասին: 1985-1992 թթ. լեհահայոց եկեղեցու տեսուչը Կազիմիր Ֆիլիպեակն էր, որը բազմիցս դիմումներ էր յղում Հռոմի Պապին՝ վերականգնելու լեհահայոց եկեղեցու արքեպիսկոպոսութիւնը: Նրա մահուանից յետոյ լեհահայոց եկեղեցու տեսուչ կարգուեց Թադէուշ քահանայ Ջալեսկին, որի ջանքերով լեհահայ եկեղեցին այժմ ենթարկւում է ոչ թէ լեհ կաթողիկ եկեղեցու պետին, այլ կաթողիկ հայոց կաթողիկոսին: Ի դէպ, եթէ ԺԸ. դարում լեհահայ եկեղեցին ունեցել է 19 միաւոր (պարաֆիա), ապա ԺԹ. դարակէսում դրանց թիւը կրճատուեց հասաւ 8-ի (Լվովի, Բժեժանիի, Ստանիսլաւի, Լըսիեցի, Տըամենիցի, Կուտիի, Հորոգենկայի եւ Սնեատինի), ներառեալ Զեռնովիցի եւ Սուչաւայի պարաֆեաները-թեմերը (Բուկովինա):

Բառարանը, որը պարունակում է նմանատիպ այլ տեղեկու-

թիւններ եւ փաստեր նոյնպէս, լեհահայերի պատմութեան, յատկապէս լեհահայոց եկեղեցու պատմութեան ասպարէզում կարեւոր ներդրում է:

Հեղինակը բառարանը կազմելիս օգտագործել է Լեհաստանի, Հռոմի, Լիւովի եկեղեցական ու պետական դիւանների, ինչպէս նաեւ առանձին աշխատութիւնների նիւթեր, բոլորը միասին մօտ հարիւր աղբիւր:

Աշխատութիւնը տպագրուել է Լեհաստանի մշակոյթի նախարարութեան նիւթական օժանդակութեամբ եւ նուիրուած է Հայաստանում քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն հռչակման 1700 եւ լեհահայ եկեղեցու պետ իսահակ Միկոլայ Իսակովիչի մահուան հարիւրամեակին:

Անդժեյ Պիսովիչի «Հայերէնի քերականութիւնը» աշխատութիւնը լոյս է տեսել Կրակովի Եագելոնեան համալսարանի եւ Լիսաբոնի Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի հովանաւորութեամբ: Այն որեւէ լեզուով գրաբար-աշխարհաբար քերականութեան կառուցուածքը միասին ներկայացնող առաջին գիտական ձեռնարկն է, որն ի դէպ, գրուած է համաշխարհային լեզուաբանութեան արդի չափանիշներին համապատասխանող մակարդակով: Այս նկատառումներից մեկնելով կարելի է ասել, որ սոյն աշխատութիւնը հայագիտութեան վերջին տարիների նուաճումներից է:

Քերականութիւնը հեղինակը ձօնել է Լեհահայերին՝ «Հայաստանի քրիստոնէութեան 1700-ամեակի առթիւ»:

Աշխատութիւնը սկսում է հայոց լեզուի եւ ժողովրդի պատմութեան մասին ընդհանուր տեղեկութիւններով: Մանրամասն ներկայացւում է գրաբարը, միջին հայերէնը, արդի աշխարհաբարի արեւմտահայ ու արեւելահայ տարբերակները եւ բարբառները:

Երկրորդ մասը նուիրուած է գրաբարին (մօտ 160 էջ), ուր ներկայացւում են նախ՝ հայոց այբուբենը, ապա՝ քերականական բոլոր հիմնական երեւոյթները (հնչիւնաբանութիւն, բառակազմութիւն, շարահիւսութիւն եւ այլն):

Գրքի երրորդ բաժնում զուգահեռաբար ներկայացւում է արդի աշխարհաբարի երկու տարբերակների (արեւմտահայերէն, արեւելահայերէն) գիտական կառուցուածքը:

Գրաբարեան մէջբերումները հեղինակը կատարել է ոսկեղա-

րեան մեր մատենագիրների (Եզնիկ Կողբացի, Ագաթանգեղոս, Եղիշէ, Մովսէս Խորենացի եւ այլք) գործերից եւ Նոր Կտակարանից:

Աշխարհաբար մէջբերումները եւ օրինակները բերել է Գրիգոր Զոհրապի, Յակոբ Պարոնեանի, Երուանդ Օտեանի, Զարեհ Խրախունու, Պերճ Պռոշեանի («Հացի խնդիր»), Զորայր Խալափեանի («Որտեղ էիր, մարդ Աստծոյ»), Դերենիկ Դեմիրճեանի («Վարդաւանք») եւ այլ հեղինակների գործերից:

Աշխատութեանը կցուած են օգտագործուած գրականութեան եւ աղբիւրների ցանկերը:

ՌԱՖԱՅԷԼ ՀԱՄԲԱՐԶՈՒՄԵԱՆ

Armenological works in Poland (summary)

Raphael Hambarzoumian

The most important of the Armenological works printed in Poland in 2001 are the following three, published in Krakow: "Armenians in Warsaw" (152 pages) by renowned orientalist Edward Dryasku, where the history of the city's Armenian community is collected in one place for the first time, "The Encyclopaedical Dictionary of Polish-Armenian Spiritualism" (122 pages) by Tadeush Zalesku, where the conduct of the 246 mainly Armenian churches active in Poland in the 18th century is given, and "Armenian (ancient Armenian, as well as modern eastern and western variations) Grammar" (480 pages) by the headmaster of the Yagiellonian University in Krakow, persologist and armenologist Andrey Pisovich, which is the first scientific manual presenting both ancient and modern grammar in any language in the history of Armenology. The last two books are dedicated to the 1700 anniversary of the declaration of Christianity as the state religion in Armenia.